
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԳԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 1923-1939
ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ՄԻՐՕՂԼՈՒ ԱՐՄԱԻԵՆԻ
(Թուրքիա, ք. Ստամբուլ)

Թուրքիոյ Հանրապետութեան սահմաններէն ներս պաշտօնապէս որպէս «փոքրամասնութիւն» կ'ընդունուին միայն ոչ-իսլամ քաղաքացիներ, ի մասնաւորի Հայեր, Յոյներ եւ Հրեաներ: Իսլամ քաղաքացիներ, զանազան տեսակետներէ (կրօնական, ազգային) տարբեր նոյնիսկ ըլլան, չեն ընդունուիր որպէս «փոքրամասնութիւն»: Քէմալականներու ազգայնական մտածման համակարգը իսլամ եղող փոքրամասնութիւնները թրքական հովանոցի տակ «մենք» ըլլալով կը հաւաքէ, իսկ այս հովանոցէն դուրս մնացողները, այսինքն ոչ-իսլամ հպատակները, անխուսափելի կերպով «միւսները» ըլլալով կը տեսնէ: Այս կացութեան պատճառները կարելի է ամփոփել հետեւեալ կերպով.

1. Պատմական պատճառներ: Թուրքիոյ Հանրապետութիւնը կերպով մը շարունակութիւնն է Օսմանեան կայսրութեան, ուր կը տիրապետէր «Միլլէթ» (համայնք) համակարգը՝ հենարան ընդունելով կրօնքը: Ըստ այս համակարգին, որ սկսելով 1454-էն, պաշտօնապէս կը տեսնէ մինչեւ Թանգիմաթ (1839), իսլամները առաջին կարգի (Millet-i hakime) իսկ ոչ-իսլամները երկրորդ կարգի քաղաքացիներ կը համարուին:

2. Քաղաքական պատճառներ: Ի նպաստ Թուրքիոյ քրիստոնեայ փոքրամասնութեանց, Եւրոպայի պետութեանց միջամտութիւններուն ընդարձակումը պատճառ կը հանդիսանայ, որ իսլամ հասարակութիւնը՝ կրօնական տարբերութեան քով, այս պատճառաւ ալ քրիստոնեայ փոքրամասնութիւնները ընդունի որպէս «միւսները»:

3. Գաղափարական պատճառներ: Անցեալի մէջ երեք ցամաքամասի տարածուած կայսրութեան տիրանալէ վերջ, XX դ. սկիզբին միայն Անատօլի տարածքով գոհանալու պարտաւորուիլն ու 1923 թ. հռչակուող հանրապետութեան կործանման վախը, ազդու կըլլայ որ Թուրք հասարակութեան մօտ յառաջանայ «Թուրքէն ուրիշ մշակութային ինքնութեանց դէմ անհանդուրժողականութիւն»¹:

Այսպէս՝ Հանրապետութեան հռչակումով Քէմալական Թուրքիոյ մէջ կը յառաջանան երկու ներհակ տարրեր՝ «մենք» եւ «միւսները»: Քէմալական վարչութիւնը մինչեւ 1930 թ. վերջ կուտայ Կայսրութեան ժամանակաշրջանէ մնացող զանազան հաստատութիւններուն, ինչպէս նաեւ ամէն մի բանի, որ Քէմալիստ հաւաքականութեան ծրարագրերուն արգելք կը հանդիսանայ կամ կրնայ հանդիսանալ: Չարտօներ նոյնիսկ ընդդիմադիր քաղաքական կազմաւորումներուն:

¹ Oran Baskın, *Türkiye'de Azınlıklar, İstanbul, 2004, s. 47-49.*

Լոզանի մէջ, պաշտօնապէս «փոքրամասնութիւն» ընդունուած այս քաղաքացիներէն օրակարգի նիւթ կը դառնան միայն Հայերն ու Յոյները, իսկ Հրէաներու մասին ընդհանրապէս չի քննարկուիր ոեւէ հարց: Եւրոպացիները, Լոզանի առաջին խորհրդաժողովին տեղի տալով Թուրքերուն գլխաւոր մէկ պահանջումին, կը հրաժարին Թուրքիոյ ոչ-իսլամ փոքրամասնութեանց ի նպաստ երկրին ներքին գործերուն միջամտելու իրաւունքէն եւ այսպէս՝ դէմ առ դէմ կը թողուն պետութիւնն ու ոչ-իսլամ տարրերը:

Քեմալական ազգայնականութիւնը, իր մշակութային արտաքին քաղաքականութեան գծով կ'ունենայ ոչ յարձակողական երեսակ մը թէեւ, բայց ասոր քով՝ ներքին քաղաքականութեան գծով, կ'ունենայ նաեւ մշակութային մեծամասնութիւնը ընկճող ազգայնական երկրորդ երեսակ մը: Այս ազգայնականութիւնը, դէմ ըլլալով Օսմանեան կայսրութեան «ռայայի» (հպատակ, հարկատու) մօտեցման (ոչ-իսլամ տարրերը «օտար» կամ «միւսը» համարելով), կը պահանջէ, որ բոլոր ոչ-իսլամ տարրերը՝ լքելով իրենց ազգային ինքնութիւնը, միաձուլուին Թուրք լեզուի, մշակոյթի եւ գաղափարի շուրջ: Ուստի ամէն ջանք ի գործ կը դնէ, որպէսզի այդ տարրերը վարչակարգի գաղափարական ոլորտի ձուլմանին մէջ խառնելով Թուրք ինքնութեան տակ միացնէ²:

Աֆիոնի երեսփոխան Իզզետ Ուլվի 17 Դեկտեմբեր 1923 թ. առաջարկագիր մը կը յանձնէ Ազգային Մեծ Ժողովի նախագահութեան, ուր կ'ըսէ. «Քանի որ վերացուած են Պատրիարքներու քաղաքական եւ վարչական իրաւունքներն ու առանձնաշնորհները, պէտք է Արդարադատութեան նախարարութեան կողմէ կոչուին, որպէս «պաշտփաւագ» այսինքն՝ «աւագերեց»: Այսպէս՝ Քեմալական կառավարութիւնը 26 Դեկտեմբեր 1923 թ. սկսեալ Պատրիարքական Աթոռի գահակալներուն կը կոչէ «Պաշտփաւագ» եւ ոչ թէ «Պատրիարք», որն մեծ հաւանականութեամբ կ'յունենայ երկու նպատակներ. արգելք ըլլալ Յունաց Պատրիարքի էգումէնիք (տիեզերական) կարգավիճակի զուգորդման, ինչպէս նաեւ վերջ տալ Յոյներու Օսմանեան կայսրութեան շրջանէն մնացած որպէս աշխարհիկ հեղինակութիւն խորհրդանշման³: 1928-29 տարեշրջանի Պետական Ալմանակի մէջ եւս կը նշուի որպէս «Յունաց Ֆէնէրի Աւագերեցութիւն», բայց Հանրապետութեան Նախագահ Մուսթաֆա Քեմալ Յունաց Ֆօթիոս Պատրիարքի հետ իր թղթակցութեանց մէջ կը սկսի գործածել «Պատրիարք» տիտղոսը⁴:

Երբ 3 Մարտ 1924 թ. կը վերացուի Խալիֆայութիւնը, նոյնպէս թուրք մամուլի մէջ ալ ծայր կուտան Պատրիարքարաններու եւ Խախամապետարանի եւս վերացման շուրջ վէճեր: Հանրապետութեան Նախագահ՝ Մուսթաֆա Քեմալ 4 Մայիս 1924 թ. հետեւեալ կերպով կ'արտայայտուի Նիւ Եորք Հերըլտ թերթի թղթակիցին. «Խալիֆայութեան հետ պէտք է նաեւ վերացնել Թուրքիոյ Յունաց եւ Հայոց

² **Bali Rıfat**, *Yahudilerin Türk Milliyetçiliği, Birikim Dergisi Sayı 102, Ekim 1997, s. 47.*

³ **Macar Elcin**, *Cumhuriyet Doneminde Istanbul Rum Patrikhanesi, Istanbul, 2003, s. 125.*

⁴ *Նոյն տեղէն, էջ 149:*

Պատրիարքություններն ու Խախամապետությունը: Պէտք է հարց տալ, թե նման կացության ո՞րքան կը հանդուրժեն Անգլիան, Ֆրանսան, Ամերիկան կամ ուրիշ որեւէ ազգ»⁵:

Լօզանի Հաշտության Դաշնագրով թէեւ կը պահպանուին փոքրամասնութեանց ներքին առանձնաշնորհները, սակայն նախ Հրեաները, ապա Հայերն եւ Յոյները կը հրաժարին այդ առանձնաշնորհներէն եւ ներքին ժողովներ գումարելով կը հաւանին «Զուիցերիական Քաղաքային Օրէններու» տրամադրութիւններուն:

Փոքրամասնութեանց առանձնաշնորհումներէ հրաժարումը ըստ երեւոյթին կամովի է, բայց իրողութիւնն այն է, որ անոնք կը պարտադրուին քաղաքական պաշտօնէութեանց եւ մամուլի թելադրանքով: Փոքրամասնութիւնները Լօզանի Հաշտության դաշնագրի 42. յօդուածէն⁶ կը հրաժարին, որովհետեւ նոր հանրապետութիւնը չէր արտօներ վերոյիշեալ յօդուածի նախատեսած առանձնաշնորհներուն գործադրութեան⁷: Լօզանի Հաշտության դաշնագրի 42. յօդուածին հրահանգին համաձայն 1925 Մայիսին կը կազմուին փոքրամասնութեանց յանձնաժողովներ, որոնց Յոյն, Հայ եւ Հրեայ անդամները կ'ընտրուին Թուրք կառավարութեան կողմէ: Երկար վիճաբանութիւններէ եւ կառավարական շրջանակներէ կատարուած ճնշումներէ վերջ, 10 Սեպտեմբեր 1925 թ. Հրեայ անդամներէ կազմուած յանձնաժողովը կը յայտարարէ, թէ Հրեայ համայնքը կը հրաժարի Լօզանի վերոյիշեալ յօդուածէն ծագում առած առանձնաշնորհներէն, որուն կը յաջորդէ նաեւ Հայ համայնքի նոյն ուղղութեամբ տուած յայտարարութիւնը: Յոյն համայնքն ալ, որ բաւական կը պայքարի, կը պարտաւորուի Նոյեմբերի 27-ին ստորագրել իրենց հրաժարման փաստաթուղթը⁸:

Թուրքիոյ Հայերը նախահանրապետական շրջանին՝ 1922 Դեկտեմբեր 24-ին, երկու ժողովուրդներու միջեւ հին բարեկամական կապերը վերահաստատելու նպատակաւ, ընդհանուր նախագահու-

⁵ Նոյն տեղէն, էջ 125:

⁶ Յօդուած 42.- Թուրք կառավարութիւնը կը հաւանի որ ոչ-խալամ փոքրամասնութեանց ընտանեկան իրաւունքներու եւ անհատական պայմաններու վերաբերեալ խնդիրները՝ այդ փոքրամասնութեանց սովորութեանց եւ բարքերուն համաձայն դրուած օրէնքներով լուծուին: Այս օրէնքները պիտի դրուին Թուրք կառավարութեան եւ շահագրգռող փոքրամասնութեանց իրաքանչիւրին հաւասար թիւով ներկայացուցիչներէ կազմուած մասնաւոր յանձնաժողովներու ձեռքով: Եթէ անհամաձայնութիւն մը ծագի, կառավարութիւնը եւ Ազգերու Ընկերակցութիւնը՝ Եւրոպայի իրաւագէտներուն մէջէն իրաւարար մը պիտի ընտրեն համաձայնութեամբ: Թուրք կառավարութիւնը կը ստանձնէ ամէն կերպով պաշտպանել յիշուած փոքրամասնութեանց վերաբերեալ եկեղեցիներ, սինակոկներ, գերեզմանատուններ եւ ուրիշ կրօնական հաստատութիւններ: Այդ փոքրամասնութեանց ներկայիս Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող վագֆներուն, կրօնական եւ բարենպաստակ հաստատութեանց ամէն տեսակ դիրութիւն եւ արտօնութիւն պիտի տրուին: Եւ Թուրք կառավարութիւնը հարկ եղած դիրութիւնները երբեք չպիտի զլանայ կրօնական եւ բարենպաստակ հաստատութիւններ հիմնելու մասին այս կարգի միւս հաստատութեանց ապահովուած դիրութիւններէն:

⁷ Bali Rifat, Cumhuriyet Doneminde Azınlık Politikaları, Birikim Kasım, 1998, s. 81.

⁸ Aktar Ayhan, Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları, İstanbul, 2000, s. 113.

թեամբ Պերճ Քերեստեճեանի, կը կազմեն «Թուրք-Հայ Բարձրացման Միութիւնը», որ շարունակութիւնը կ'ըլլայ 28 Սեպտեմբեր 1919 թ. Պոլսոյ Գատըզիւղ (Քաղկեդոն) թաղամասին մէջ հիմնուած «Կարապետեան Սանուց Միութեան»: Բայց սոյն Միութիւնը կամաց կամաց կը շեղի իր բուն նպատակէն եւ ոչ միայն Հայ հասարակութեան վրայ բեռ մը կը դառնայ անհարկի ծախքերով, այլ նաեւ կը փորձէ ոտնձգութիւններ կատարել Հայ ժողովուրդի օրինական իշխանութեանց սահմաններէն ներս: Պոլսոյ Հայ համայնքի Լօզանի վերոյիշեալ յօդուածէն ծագում առած առանձնաշնորհներէն հրաժարման մէջ կարեւոր դեր կը կատարէ այս Միութիւնը⁹: Հանրապետութեան առաջին տարիներուն միակուսակցական վարչութիւնը (Հալք կուսակցութիւն) երկրի ամբողջ բաղկացուցիչ տարրերը թրքացնելու համար, կը մշակէ ու գործադրութեան կը դնէ «թրքացման քաղաքականութիւն», որն կը հետապնդուի մեթոտիկ կերպով, յատկանշական է ոչ-իսլամ փոքրամասնութեանց նկատմամբ իր խտրական որոշումներով¹⁰:

Պոլսոյ քաղաքապետութիւնը կը հրահանգէ թատրոններու եւ շարժանկարներու մէջ ծառայողներուն՝ թրքերէն խօսիլ հանդիսականներուն հետ: Թրքերէնը ընդհանրացնելու համար կը կազմուին «Թիւրք Օճաղը»ի¹¹ յանձնաժողովներ, որոնց աշխատանքը կը տարածուի «Քաղաքացի, թրքերէն խօսէ» նշանախօսքով, որն ընդմիջումներով կը շարունակէ մինչեւ 1930-ականներու վերջերը, նոյնիսկ ալ աւելի երկար: Թուրք թերթերը, անվերջ օրակարգի վրայ կը բռնեն Թուրքերէն լեզուն ոչ-իսլամ հպատակներու մէջ ընդհանրացնելու խնդիրը, քննադատութիւններու թիրախ դարձնելով զանոնք:

Ոչ-Թուրք առեւտրական եւ սեղանաւորական բոլոր հաստատութիւններու մէջ պարտաւորիչ կը դառնան թուրքերէնով գործառնութիւնները, մասնաւոր զարկ կը տրուի փոքրամասնութեանց եւ օտար վարժարաններու աշակերտները Թուրք քաղաքացիներ դարձնելու քաղաքականութեան: 1924 աշնան կը հրահանգուի թրքերէն լեզուով աւանդել՝ «Թրքերէն», «Թուրքիոյ Պատմութիւն» եւ «Աշխարհագրութիւն» դասերը¹²: Իսկ 17 Հոկտեմբեր 1926 թ. եւ 591 համար շրջաբերականով Կրթական գործավարութիւնը փոքրամասնութեանց վարժարաններուն կը հրահանգէ այս դասերը աւանդել պաշտօնական նախակրթարաններու ծրագրին համաձայն եւ Թուրք ուսուցիչներու կողմէ որոնց վճարումները կը կատարեն դպրոցներու վարչութիւնները¹³:

⁹ *Յանաջ, 14.VIII.1925*:

¹⁰ **Aktar Ayhan**, *նշուած աշխ., էջ 102*:

¹¹ «Թիւրք Օճաղը» ներք կը հաստատուին 1912 թուականին, որոնք արագօրէն կը ծաւալեն իթթիհատի շունչին տակ: Քէմալապետութեան շրջանին կ'ունենան 45-50 մասնաճիւղեր, 100.000 անդամներով: 1932-ին կը լուծուին, վերակոչուելով ժողովրդական տուն «Հալք Էվի», որը կը կոչուի քէմալական սերունդ մը պատրաստելու:

¹² *Յուսաբեր, 10.X.1924*:

¹³ *Ազդարար, 8.XI.1927*:

Միակուսակցական շրջանին մասնաւոր հաստատութեանց նման փոքրամասնութեանց վարժարաններէն կը գանձուի շահատուրք (եկամտահարկ), որ կը շարունակուի մինչեւ 1946 թ.¹⁴: 1926-ին պաշտօնին վերջ կը տրուի Ամերիկեան վարժարաններուն մէջ պաշտօնավարող Յոյն եւ Հայ ուսուցիչներուն¹⁵: Կը հրահանգուի ոչ-իսլամ վարժարաններու կնիքներուն ու պաշտօնական բոլոր թուղթերուն վրայ գործածել թրքերէն լեզուն, առանց ռեւէ ուրիշ լեզու աւելցնելու¹⁶: 1934 Սեպտեմբերին կրթական գործավարութիւնը վերջ կուտայ օտար եւ փոքրամասնութեանց լիսէներու վկայական տալու իրաւունքին: Այս վարժարաններէն շրջանաւարտ եղողները կը պարտաւորուին յանձնել «պաքալորիա»-ի քննութիւն եւ ստանալ գործավարութեան կողմէ տրուելիք վկայականը¹⁷: 1936-1937 տարեշրջանին փոքրամասնութեանց Լիսէներու թուրք ուսուցիչներէն մէկը կ'ընտրուի իբրեւ «փոխ-տնօրէն», որպէսզի օգնէ տնօրէնին՝ կրթական տնօրէնութեան հետ պաշտօնական յարաբերութիւններուն եւ թղթակցութեանց մէջ: Իսկ յաջորդ տարեշրջանին Կրթական տնօրէնութեան կողմէ նախակրթարաններու համար «փոխտնօրէն» կը նշանակուի սոյն վարժարանի թուրք մշակոյթի կամ թրքերէն լեզուի ուսուցիչներէն մէկը¹⁸:

Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովը 24 Ապրիլ 1924-ին միաձայնութեամբ կը վաւերացնէ Թուրքիոյ Նոր Սահմանադրութիւնը, որուն 88-րդ յօդուածին մէկ պարբերութիւնը կ'ըսէ. «Բոլոր այն փոքրամասնութիւնները, որոնք իրենց սեփական մասնաւոր վարժարաններն ունին եւ իրենց լեզուն կ'ուսուցանեն, կրնան Թուրք կոչուիլ այնքան ատեն, որքան քաղաքացի ըլլալով կ'ապրին երկրի սահմաններէն ներս»: Այս յօդուածի տրամադրութեամբ իրենց թրքահպատակութիւնը կը կորսնցնեն բոլոր այն Հայերն ու Յոյները, որոնք տարագրուած կամ փախած են Թուրքիայէն եւ չեն կրնար վերադառնալ Թուրքիա¹⁹:

Թէեւ 1924 թուակիր սոյն Սահմանադրութեան մէջ նշուած է, թէ առանց կրօնի խտրութեան Թուրքիոյ բոլոր քաղաքացիները հաւասար են, բայց եւ այնպէս. յօդուածին մէջ ալ կ'ըսուի. «Թուրքիոյ Պետութեան կրօնը՝ Իսլամն է», որը բացայայտ կերպով կը ցուցնէ, թէ ոչ-իսլամները կ'ըլլան երկրին երկրորդ կարգի քաղաքացիները: 1928 թ. այս յօդուածը կը վերացուի Սահմանադրութենէն, բայց կացութիւնը գործնական կերպով չփոխուի, քանի որ այս մէկը չազդէր Հանրապետութեան թուրք-իսլամ քաղաքականութեան եւ Թուրքիոյ ոչ-իսլամ հպատակները միայն այդ պատճառաւ, որ ոչ-

¹⁴ Macar Elcin, *Cumhuriyet Döneminde İstanbul Rum Patrikhanesi*, İstanbul, 2003, s. 174.

¹⁵ Նոյն տեղէն, էջ 173:

¹⁶ *Յաւազ*, 2.III.1927:

¹⁷ *Արեւելք*, 28.XII.1934:

¹⁸ *Հայաստանի Կոչնակ*, 22.V.1937:

¹⁹ *Պայքար*, 26.IV.1924:

իսլամ են եւ կը հետապնդուին Ոստիկանական Տնօրէնութեան կողմէ կազմուած մասնաւոր միութեան²⁰ մը կողմէ²¹:

1927 թ. եւրոպական երկիրներու հետեւելով, հրատարակուող «Դեղարաններու եւ Դեղագործներու մասին Օրէնքի» գործադրութեան ընթացքին (10.000 բնակչութեան 1 դեղարան) կը փակուին բազում դեղարաններ, որոնց մեծամասնութիւնը կը կազմեն ոչ-իսլամներուն դեղարանները²²:

Թրքացման հոսանքին կը մասնակցին նաեւ թուրք քրիստոնէաները: Թուրք Օրթոտոքս համայնքի երեւելիներէն Իսթամաթ Զիհնի Էօզտամարի դեկավարութեամբ, Յոյներն ու Հայերը թրքացնելու նրպատակաւ կը կազմուի «Լաիք Թուրք Քրիստոնէաներու Միութիւնը», որուն անդրանիկ ժողովը կը կատարուի 14 Յուլիս 1935 թ. «Հալքելի» (ժողովուրդի տուն) մէջ: Միութեան նախագահը՝ Տավիտ Սավուլ Եըլմազ կը բացատրէ, թէ միութեան նպատակն է Թուրք օրէնքներուն համապատասխան ծառայել թուրք քաղաքացիութեան զարգացման գործին²³:

1937 թ. կարգ մը քաղաքապետութիւններ բացարձակապէս կ'արգիլեն իրենց քաղաքի սահմաններէն ներս Թրքերէնէն զատ ոեւէ լեզուի գործածութիւնը²⁴: Քաղաքի առեւտուրը կը գտնուի ընդհանրապէս ոչ-իսլամ քաղաքացիներու ձեռքին մէջ եւ այս պարագան կ'յանհանգստացնէ Թուրքիոյ Հանրապետական կառավարութիւնը: Այսպէս՝ ոչ-իսլամներու հանդէպ Իթթիհատականներու որդեգրած հայեացքն ու թրքացման քաղաքականութիւնը անընդհատ կը շարունակուի նաեւ Հանրապետութեան շրջանին ալ: 1920-ական թթ. կարգադրութիւնները, ուր կ'արգիլուին Հայ վաճառականներու ելքը՝ քաղաքի սահմաններէն դուրս, կամ Հայերը կը պարտադրուին իրենց տունները օգտագործել Թուրք գաղթականներու հետ միասին, կը շարունակուին Հրեաներուն դէմ 1934 թ. կատարուած «Թրաքիայի աւերում»-ով (pogrom), 1942 թ. «Ունէտորութեան Տուրք»-ով²⁵, 1955 թ. 6-7 Սեպտեմբերի²⁶ դէպքերով²⁷:

Թուրքոյն փոխանակութիւնը: Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի 27 Դեկտեմբեր 1922 թուականի փակ նիստին Իսմայիլ Սուփիի Պէյի

²⁰ Այս միութիւնը, որ 19 Օգոստոս 1989 թուականին «Փոքրամասնութեանց Մասնաճիւղ» անունը կ'յառնէ, ցայսօր կը շարունակէ իր գործունէութիւնը:

²¹ Macar Elcin, Cumhuriyet Döneminde İstanbul Rum Patrikhanesi, İstanbul, 2003, s. 168.

²² Rifat Bali, Cumhuriyet Yıllarında Türkiye Yahudileri, Bir Türkleştirme Seruveni, İstanbul, 2005 (7.Baskı), s. 218.

²³ Նոյն տեղէն, էջ 273:

²⁴ Aktar Ayhan, Varlık Vergisi ve “Türkleştirme” Politikaları, İstanbul, 2004, s. 44.

²⁵ 11 Նոյեմբեր 1942 թուական եւ 4305 թիւ օրէնքով պետութիւնը Թուրքիոյ քաղաքացի ոչ իսլամ փոքրամասնութենէն կը պահանջէ բարձր տուրք եւ անոնք որոնք չեն կարողանար վճարել զայն, կը դրկէ Ազգալէ, ծանր պայմաններու տակ աշխատելով վճարելու համար: 27 Յունուար-3 Յուլիս, 1943 թթ. 1229 հոգի Ազգալէ կը դրկուի այս ձեւով:

²⁶ 6-7 Սեպտեմբեր 1955 թուականին Ստամպուլ եւ Իզմիրի մէջ ոչ-իսլամ փոքրամասնութեանց դէմ կատարուած յարձակումն ու թալանը:

²⁷ Mahcupyan Etyen, İcimizdeki Öteki, İstanbul, 2005, s. 270.

կողմէ կը տրուի գրաւոր առաջարկ մը, ուր ան կ'առաջարկէ թէ՛ Պոլսոյ Յոյն եւ Հայերը փոխանակութեան ենթարկել եւ թէ բոլոր Պատրիարքարանները Պոլիսէն հեռացնել²⁸: Հակառակ, որ Լոզան գտնուող Թուրք պատուիրակութիւնը գրաւոր եւ բանաւոր կերպով զանազան դիմումներ կը կատարէ, որպէս զի Յունաց Պատրիարքարանը Թուրքիայէն փոխադրուի, սակայն ԱՄՆի, Անգլիոյ եւ այլ պատուիրակութիւններ չեն ընդունիր եւ կ'որոշուի, որ Պատրիարքարանը մնայ Ստամպուլ բայց հրաժարի քաղաքական եւ աշխարհիկ իրաւասութիւններէն:

30 Յունուար 1923 թ., երբ դեռ Վեհաժողովը կը շարունակուէր, Լոզան քաղաքին մէջ Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ կը ստորագրուի «Թուրք-Յոյն Փոխանակութեան վերաբերեալ պայմանագիր եւ Բրոթոգոլ», ըստ որուն կ'իրագործուի պարտադիր փոխանակութիւնը՝ Անատոլու ապրող շուրջ 1.200.000 Յոյն-Օրթոտոքս (Ուղղափառ) Թուրքահպատակներու եւ Բուսֆորի ապրող 400.000 Մահմետական Յունահպատակներու: Այս փոխանակութենէն դուրս կը մընան Պոլսոյ Քաղաքապետութեան սահմաններուն մէջ 30 Հոկտեմբեր 1918-էն առաջ հաստատուած (Էթարփի) Յոյներն ու Արեւմտեան Թրակիայի իսլամները²⁹:

Իսկ 1923 թ. իրագործուող այս փոխանակութեան նախափորձը կը կատարուի Պալքանեան պատերազմէն անմիջապէս վերջ՝ 1914 թ.: Բուսֆորի մահմետականները, որոնք Օսմանեան բանակի պարտութեան եւ Պուլղարական բանակին մինչեւ Չաթալճա հասնելուն պատճառաւ շատ դժուար կացութեան մատնուելով մի քանի օրուան մէջ իրենց ծննդավայրը լքելով կը փախին դէպի Կայսրութեան մայրաքաղաքը, հոնկէ կ'անցնին Անատոլու, կը գործակցին իթթիհատականներուն, որոնք կը ճնշեն տեղւոյն Յոյներուն: Այսպէս՝ Անատոլուի Յոյն Օրթոտոքսները փախուստի դիմելու կը պարտաւորուին Թուրքիոյ արեւմտեան ծովափներէն դէպի Էգէական կղզիները³⁰:

Փոխանակութեամբ Յունաստան գացողները ընդհանրապէս արհեստաւոր ու վաճառական քաղաքացիներ իսկ Թուրքիայ եկողները գիւղացիներ կ'ըլլան, այս պատճառաւ ալ Յունաստան տնտեսական վերելք կ'ունենայ իսկ Թուրքիա ճիշտ հակառակը վայրէջք կ'ապրի: Փոքրամասնութեանց (Հայերն ու Յոյները) Անատոլուէն հեռացումով կը տկարանայ տեղացի արտադրողի եւ օտար մեծաքանակ գրնորդի միջեւ հաղորդակցման կապը, ուր տիրապետող տարրերն էին ոչ-իսլամ վաճառականները եւ կը նուազին արտաքին առեւտրական ձեռնարկները, որն զգալի հարուած կ'ըլլայ երկրի տնտեսական կեանքին համար³¹:

Իսկ թէ ինչո՞ւ չկատարուիր Թուրքիոյ հայոց փոխանակութիւնը Հայաստանի թուրքերուն հետ, կը պարզուի հետեւեալ տողերով:

²⁸ **Macar Elcin**, *Cumhuriyet Doneminde İstanbul Rum Patrikhanesi, İstanbul, 2003, s.107.*

²⁹ *Նոյն տեղէն, էջ 98:*

³⁰ **Aktar Ayhan**, *նշուած աշխ.*, էջ 26:

³¹ *Նոյն տեղէն, էջ 51:*

28 Նոյեմբեր 1922 թ. Հիւսէյին Բաուֆ պէյ Լօզան գտնուող թուրք պատուիրակութեան նախագահ Իսմէթ Ինէօնիւի ուղարկած հեռագրով կը տեղեկացնէ Ազգային Մեծ Ժողովի գաղափարն ու որոշումը՝ Թուրքիոյ հայոց եւ Հայաստանի թուրքերուն փոխանակման մասին: Ինէօնիւ իր պատասխանին մէջ կը բացատրէ նման փոխանակութեան անկարելիութիւնը, պարզելով թէ Հայաստանի պետութեան հետ այս նիւթի շուրջ բանակցիլ կը նշանակէ ճանչնալ Արեւելքի սահմաններն ու կասկածի տակ ձգելն Մոսկուայի 1921 թ. փետրվարի 26 մարտ 16-ի Դաշնագիրը, իսկ նոյն նիւթի շուրջ Ռուսերուն հետ բանակցիլը առիթ կուտայ Մոսկուայի Դաշնագրի վերնայման: Ուրեմն երկու պարագան ալ կարելի չէ, իսկ հայոց փոխանակութիւնը ոչ նպատակայարմար³²:

Այն Յոյներուն, որոնք փոխանակութեան ենթակայ չեն, ինչպէս նաեւ Հրեայ փախստականներուն, Երթեւեկի օրէնքին համաձայն կ'արտօնուի վերադառնալ Թուրքիայ: Հայերու պարագան տարբեր կ'ըլլայ. կ'արտօնուի Թուրքիոյ սահմաններէն ներս մտնել միայն այն Հայերուն, որոնք կանոնաւոր անցագրով մեկնած են: Բացառութիւն կը կազմեն Թուրքիայ գտնուող այրերու արտասահման գտնուող կիներն ու 18 տարեկանէն փոքր զաւակները³³:

26 Փետրուար 1925-ին Ներքին Գործոց նախարարութիւնը կ'արգիլէ Յոյներէն զատ բոլոր փոքրամասնութեանց Անատոլու երթեւեկել առանց նախապէս արտօնութիւն ստանալու: Այս փոքրամասնութեանց ազատ երթեւեկելու իրաւունքը կը տրուի միայն Կէպզէլի եւ Չաթալճայի միջեւ մնացած վայրին համար, իսկ աւելի վերջ նոյն արգելքը կը կիրառուի նաեւ Յոյներուն: Ամէն ճամբորդութենէ առաջ պէտք կ'ըլլայ դիմումագիր մը տալով արտօնութիւն առնել ոստիկանութենէն, որ կը պարունակէ երթեւեկելու նպատակը եւ ժամանակամիջոցը: Իսկ Հայերուն կ'արգիլուի նաեւ բնակիլ Իզմիրի մէջ³⁴:

1920-ականներէն սկսեալ հետզհետէ կը խտանայ ոչ-իսլամ վաճառականներու եւ օտար դրամագլուխի տէրերուն դէմ կատարուող ճնշումները: Շրջանի կարգախօսը բացայայտ է. «Թուրքիան Թուրքերունն է»³⁵: «Ազգային վաճառականներու» կողմէ 1922 Դեկտեմբերին կը կազմուի «Թուրք Ազգային Առեւտրական Միութիւնը», իսկ 1923 Օգոստոսին ոչ-իսլամ վաճառականները վարչութենէն զրտելով «Պոլսոյ Առեւտրական Մենեակի» վարչութիւնը թրքացման կենթարկուի³⁶:

Ըստ 31 Մարտ 1926 թ. պաշտօնաթերթին մէջ հրատարակուող թիւ 778 «Պաշտօնէից Օրէնքի» 4. յօդուածի տրամադրութեան, պաշ-

³² Okutan M. Cağatay, *Tek Parti Doneminde Azınlık Politikaları*, İstanbul, 2004, s. 72.

³³ Պայքար, 21.VIII.1924:

³⁴ Macar Elcin, *նշուած աշխ.*, էջ 171:

³⁵ Aktar Ayhan, *նշուած աշխ.*, էջ 55:

³⁶ Նոյն տեղէն, էջ 57:

Լրաբեր 3-6

տօնեայ ըլլալու համար նախապայման կ'ըլլայ «Թուրք» ըլլալ: Նոյն օրէնքի 10. յօդուածին համաձայն, ամէն պաշտօնեայ կ'ունենայ իր վարքը (կենսագրական) ցոյց տուող պահարան, ուր կը գրանցուի անպայման դաւանանքն ու ազգութիւնը: Վարքագրի մէջ այս տեսակի բացատրութեանց գոյութիւնը կրնայ մեկնաբանուիլ թէ տարբեր ազգութենէ եւ դաւանանքէ անձեր կ'ընդունուին որպէս պաշտօնեայ, բայց իրականութիւնը բոլորովին տարբեր կ'ըլլայ³⁷: Փոքրամասնութեանց անդամները միակուսակցական շրջանին հազուադիւս բացառութեամբ դուրս կը ձգուին պաշտօնական ասպարէզներէ, իսկ ամբողջութեամբ սպայական պաշտօնէն³⁸: Պոլսահայ լրագրող Տքթ. Յակոբ Սվապեան բաղդատելով Կայսրութեան եւ Հանրապետութեան շրջանները, կ'արտայայտուի հետեւեալ կերպով. «Կը պատմուի, թէ Օսմանեան Կայսրութեան շրջանին Հայերը եղած են կառավարիչներ, փաշաներ: Կուգեմ հարցնել, թէ ինչո՞ւ Հանրապետութեան շրջանին չէ եղած այսպիսի բան մը: Արդեօ՞ք, կայսրութեան շրջանի հայերը խելացի եւ ընդունակ էին, իսկ Հանրապետութեան շրջանինները՝ յիմար»³⁹:

«Հրօնիքայի» դատը⁴⁰: Կ. Պոլսոյ Յոյն «Հրօնիք» թերթին 24, 25, 26 եւ 27 Փետրուար 1929 թուակիր համարներուն մէջ հրատարակուող «Անատօլուի պարտութենէն վերջ, ինչպէ՞ս իրականացաւ Յունական յեղափոխութիւնը եւ ինչպէ՞ս յաջողեցաւ» խորագրեալ յօդուածաշարքը արձագանք կը գտնէ թուրքական թերթերուն մէջ եւ պատճառ կը հանդիսանայ մեծ հակազդեցութեան:

6 Մարտ 1929 թիւ «Իգտամ» թուրք թերթը, թրքերէնի կը թարգմանէ Յոյն թերթի «ակրիդներա» բառը պարունակող հետեւեալ հատուածը, նշելով որ թրքութեանը կը նախատէ. «Պատերազմի ընթացքին, երբ մենք կը փախչէինք, Ասիայէն եկող թուրքերը վայրի չորքոտանիներու նման կը հետապնդէին մեզ: Իզմիրի մայր հայրենիք չվերադառնալը կը նշանակէ քաղաքակրթութեան յառաջացումը՝ դէպի Արաբ թափառական ցեղապետութեան»: «Ճումհուրիյէթ» օրաթերթը քորջ կորակէ «Հրօնիք» թերթն եւ իր գրութիւններով թիրախի կը վերածէ բոլոր Յոյն համայնքը: Ոստիկանութիւնը քննութիւն կը կատարէ ու կորոշէ թէ «ակրիդներա» բառը կը նախատէ թրքութիւնը⁴¹: «Հրօնիք» թերթը կը փակուի եւ կը ձերբակալուի թերթի պատասխանատու տնօրէնը՝ Տկ. Էլէնի⁴²:

Թուրք թերթերը ուրախութեամբ կ'ողջունեն որոշումը եւ կ'ազդարարեն փոքրամասնութեանց թերթերը: Այս առթիւ «Ճումհուրիյէթ» կը նշէ, որ փոքրամասնութեանց թերթերը պետք չէ երբեք մոռնան թէ լոյս կը տեսնեն Թուրքիոյ հողերուն վրայ:

³⁷ Okutan M. Cağatay, *նշուած աշխ.*, էջ 140:

³⁸ *Յանաջ*, 12.II.1938:

³⁹ Kılıç Şengul, *Biz ve Onlar, Istanbul, 1992, s. 65:*

⁴⁰ Okutan M. Cağatay, *նշուած աշխ.*, էջ 243-246:

⁴¹ *Cumhuriyet*, 3.III.1929.

⁴² *Son Saat*, 5.III.1929, *İkdam*, 5.III.1929.

«Հրօնիքայի» արտօնատերը Հաճոփուլօ Յոյն մըն է եւ նման արտայայտութիւններով ամբաստանեալի կը վերածուի Յոյն փոքրամասնութիւնը, որն զգալի ազդեցութիւն կը թողու իրենց վրայ եւ Յոյն համայնքը մեծ բազմութեամբ կը հետեւի Տկ. Էլէնիի դատին⁴³: «Հրօնիքայի» դատը կը սկսի Մարտի 5-ին, ուր Տկ. Էլէնի թրքերէն չգիտնալով, թարգմանի միջնորդութեամբ կ'արտայայտէ իր գաղափարները: Ան կը յայտնէ, թէ «ակրիոթերա» կը նշանակէ փառասիրութիւն եւ ոչ թէ վայրի: Կը դիմեն Յունական պատմութեան փրօֆէսէօր Ֆատըլ Նազմի պէյին, որն իր կարգին յստակ պատասխան մը չի կրնար տալ: Հոս պէտք է նշել, թէ Տկ. Էլէնին չի կրնար գտնել իրեն պաշտպանութիւնն ստանձնելու պատրաստ ռեւէ փաստաբան, նոյնիսկ Յոյն: Այս մէկն արդէն իսկ կը փաստէ, թէ այս դատը որքան բացասական ազդեցութիւն կը գործէ Յոյն համայնքի վրայ: Դատարանը որոշում կը կայացնէ, թէ Տկ. Էլէնի յանցաւոր է⁴⁴: Վճռաբեկը կը բեկանէ որոշումը եւ 17 նոյեմբեր 1929 թ. որոշում կը կայանայ, թէ Տկ. Էլէնի յանցաւոր չէ, ուստի ազատ կ'արձակուի⁴⁵:

Թուրքիոյ Հանրապետական կառավարութիւնը վարանած է վըստահելու փոքրամասնութեանց: Այս անվստահութիւնը կարելի է տեսնել նաեւ թերթերու սինակներուն մէջ: Օրինակ՝ 23 Մարտ 1929 թուակիր «Սօն Սաաթ» օրաթերթը կը գրէ, թէ «պէտք չէ վստահիլ Ֆէնէրի Յունաց Պատրիարքարանին, որովհետեւ ան՝ Պոնտոսական գործունէութեանց մէջ է արդէն»: 12 Փետրուար 1930 թուակիր «Փոլիթիքա» կ'ազդարարէ, թէ «Հայոց Պաշտպանը»⁴⁶ կը հետաքրքրուի ոչ միայն կրօնական, այլ նաեւ աշխարհիկ գործերով»⁴⁷:

«Հրօնիքայի» դատէն կարելի է յառաջացնել ուրեմն այն արդիւնքը, թէ այդ առթիւ թուրք օրաթերթերուն անգամ մը եւս առիթ կ'ընծայուի արտայայտել՝ ազգային փոքրամասնութեանց դէմ իրենց անվստահութիւնը: Այս արտայայտութեանց պատճառաւ է, որ Յոյն համայնքը չի համարձակիր ամենափոքր բացատրութիւն մը նոյնիսկ տալ սոյն նիւթի շուրջ եւ կը նախընտրէ անձայն մնալ:

Փոքրամասնութեանց զինուորական ծառայութիւնը: Միակուսակցական կառավարութեան շրջանին փոքրամասնութիւնները արգելքներու կը հանդիպին քաղաքական իրաւունքներու գործածութեան եւ հասարակական պաշտօններ ստանձնելու միջոցին, ինչպէս նաեւ հարցեր կ'ապրին իրենց զինուորական ծառայութեան ընթացքին: Փոքրամասնութեանց զինուորական ծառայութեան հարցը կը սկսի «Թանգիմաթ»ով: Մինչեւ 1839 «Ճիգլէ» վճարելով, զինուորական ծառայութենէ զերծ մնացող փոքրամասնութիւնները կը պարտաւորուին զինուորագրուիլ, երբ «Թանգիմաթը» կը նախատեսէ բոլոր

⁴³ *İkdam*, 6.III.1929.

⁴⁴ *İkdam*, 21.III.1929.

⁴⁵ *İkdam*, 17.XI.1929.

⁴⁶ Կառավարութիւնն ու Թուրք մամուլը, Վարչային հեղինակութենէ զրկուող Հայոց ու Յունաց Պատրիարքներն այսպէս կը կոչեն:

⁴⁷ **Okutan M. Cağatay**, *նշուած աշխ.*, էջ 127:

հայատականություն միջեւ հաւասարություն: Պետությունը 1861 թ. «Պետել-ի Ասկերի» անուան տակ (զինուորական տուրք - Մ. Ա.) պաշտպանութեան տուրք մը կը կիրարկէ եւ կը յայտարարուի թէ փոքրամասնութիւնները զերծ են զինուորական ծառայութենէ, որը կը շարունակուի մինչեւ 1908, երբ «Բ. Մէշրութիյէ»-ով (Մահմանադրութիւնով) կ'որոշուի փոքրամասնութեանց համար զինուորական ծառայութիւն եւ 1909-ի աշնան ոչ-խալամներ կրկին կը սկսին զօրակոչուիլ: Ա. Աշխարհամարտին, փոքրամասնութիւնները ռազմա-ճակատներէն հեռու կը բռնուին եւ կը գործածուին կազմուած «Աշխատաւորներու գումարտականերու» մէջ: Քէմալական վարչակարգը փոքրամասնութեանց առջեւ կը փակէ Զինուորական Ազատեմիներու եւ Ռազմական Դպրոցներու դռները եւ Սպայական ասպարէզը կ'արգիլուի անոնց⁴⁸:

Միակուսակցական շրջանին, կանոնաւոր կերպով փոքրամասնութեանց զօրակոչի վերաբերեալ հարցը կը ծագի 1939 թ.: Պետությունը գործադրութեան կը դնէ փոքրամասնութեանց համար անգէն զինուորութիւն: Այսպէս անոնք իրենց զինուորական ծառայութիւնը կը մատուցեն մէկ ու կէս տարի, որպէս սպաների ծառայութեան տըրրուած զինուորներ (Էմիր Էրի)⁴⁹: Կարելի կ'ըլլայ նաեւ փրկագին վճարելով 6 ամիս ծառայութիւն կատարել⁵⁰:

Քիւրտ ազատագրական շարժումը: Հանրապետութեան շրջանին Քիւրտ ազատագրական շարժման երկու կարեւորագոյն ապստամբութիւնները կըլլան Շէյխ Սայիտի (1925) եւ Տէրսիմի (1937) ապստամբութիւնները, որպէս պատասխան իրենց հանդէպ կատարուած ձուլման եւ մշակոյթի ոչնչացման քաղաքականութեան:

1925-ի Փետրուարի 13-ին Շէյխ Սայիտի ապստամբութեամբ կը սկսի «Քիւրտ ազատագրական շարժումը», որն ծնունդ կ'առնէ Էռկանի գաւառի Փիրան գիւղին մէջ Թուրք ժանտարմաներու եւ Շէյխ Սայիտի գործակիցներուն միջեւ սկսող բախումներով: Ապստամբութիւնը շատ շուտ կը տարածուի ամբողջ շրջանին եւ բանակը, որ ապստամբութեան արգելք ըլլալու պարտականութիւն ստանձնած էր, 25 փետրուարին կը պարտաւորուի ետ քաշուիլ դէպի Տիգրանակերտ եւ յաջորդ օրն արդէն ապստամբողներուն ձեռք կանցնի Էլազըղը: Հակառակ որ փետրուարի 21-ին Էլազըղ, Մուշ, Կենչ, Էրկանի, Տէրսիմ, Տիգրանակերտ, Մարտին, Ուրֆա, Սիվերէկ, Սիիրտ, Բաղէշ, Վան եւ Հաքքարիի մէջ արդէն յայտարարուած էր պաշարման վիճակ, Թուրք կառավարական ոյժերը չեն յաջողիր գերակայութիւն ձեռք բերել եւ Ֆէթիհ Օցյարի գլխաւորած կառավարութիւնը պաշտօնէն կը հրաժարի:

Մարտի 3-ին վարչապետի պաշտօնն կը ստանձնէ Իսմէթ Փաշան (Ինէօնիւ) եւ յաջորդ օրն իսկ Խարբերդի մէջ Արեւելեան եւ Էնկիւ-

⁴⁸ Նոյն տեղէն, էջ 131-134:

⁴⁹ Նոյն տեղէն, էջ 136:

⁵⁰ 1941 թուականին, նախապէս իրենց զինուորական ծառայութիւնը մատուցած փոքրամասնութիւնները կրկին զինուորական ծառայութեան կը կանչուին, որն կ'անուանուի «20 Kur'a İhtiyatlar- 20 վիճակ պահեստիներ»:

րիի մէջ Արեւմտեան «Անկախութեան դատարաններ» կը կազմուին, որոնք կը կախեն բազմաթիւ քիւրտեր եւ կը տեղահանեն հազարաւոր քիւրտ ընտանիքներ: Ազգային Մեծ Ժողովի մէջ կ'ընդունուի Իսմէթ Փաշայի կողմէ Մարտի 21-ին տրուած գրաւոր առաջարկը, ըստ որուն վճռաբեկի ճամբան կը փակուի ամբաստանեալներու համար եւ մահապատիժի կիրառման համար բաւարար կը նկատուի որեւէ հրամանատարի վաւերացումը: Ապստամբութեան ճակատագիրը կը փոխուի Մարտի 7-ի գիշերը, երբ Շէյխ Սայիտի ոյժերը Տիյարպէքիի (Տիգրանակերտ) յարձակումի ընթացքին պարտութիւն կը կրեն կառավարական ոյժերուն դէմ: Շէյխ Սայիտ եւ իր խումբը Ապրիլի 14-15-ի գիշերը Վարթո երթալով կը յանձնուին, որոնց դատը կը սկսի Մայիսի 26-ին եւ մահապատիժը կը գործադրուի Յունիսի 28-29-ի գիշերը⁵¹:

1927 թ. ամբողջ տարի Թուրք կառավարութիւնը կը զբաղի քրքրական խնդրով: Զանգուածային տեղահանութիւններ կը սկսին արեւելեան նահանգներէն դէպի Անատոլիոյ թրքաշատ կեդրոնները: Էնկիւրիի կառավարութիւնը կը հրատարակէ «աւատապետութիւնը ջնջելու» օրէնք մը, որպէս զի բնաջնջելով աշիրէթապետները (ցեղապետ), արմատական կերպով վերջ տայ անջատողական շարժման: Այս օրէնքով ճորտ գիւղացիները կը տիրանան ցեղապետներու հողերուն:

1927-ին հակաքիւրտ քաղաքականութեան զուգընթաց իբրեւ հիմնական սկզբունք, կը հետապնդուի Արեւելեան նահանգները թրքացնելու քաղաքականութիւն երկու կերպով. թէ՛ Արտասահմանէն թուրքեր տեղաւորելով արեւելեան նահանգները եւ թէ՛ տեղացի քիւրտ բնակչութիւնը թրքացնելով: Յունուարի վերջին օրերուն Ներքին գործաւար Ճէմիլ պէյ մամուլի միջոցով կը յայտարարէ. «Արեւելեան նահանգներուն մէջ 30.000 թուրք զաղթականներ զետեղելու գործը կը գտնուի մեր 1927-ի ծրագրին մէջ»: Արեւելեան Անկախութեան դատարանը երկու տարի գործելէ վերջ կը ջնջուի 28 Փետրուարին, իսկ քիչ անց նաեւ Արեւմտեանը⁵²:

Քիւրտ յեղափոխութիւնը, որպէս կազմակերպեալ ապստամբութիւն կը ձախողի, սակայն վճռականապէս չի վերջանար: 1937 թ. Մարտի 21-ի գիշերը, կը սկսի Տէրսիմ (Թունջէլի)-Էրզինճան ճանապարհին վրայ գտնուող Փահ գաւառակի փայտաշէն կամուրջին հրկիզմամբ Սէյիտ Բըզայի ղեկավարութեամբ իրականացող «Տէրսիմի ապստամբութիւնը»:

1937-ի Մայիսի 4-ին Նախարարական ժողովը հանրապետութեան նախագահ Մուսթաֆա Քէմալի ալ մասնակցութեամբ կը գումարուի, ուր որոշում կ'ընդունուի ապստամբութեան շրջանի բնակիչները հաւաքաբար փոխադրել ուրիշ վայրեր եւ գիւղերն յանկարծակիի բերելով զենքերն ու մարդիկ հաւաքել ու գիւղերն աւերել:

⁵¹ **Köker Osman**, *Kurt Isyanlarının Liderleri Nasıl Yargılandı, Nasıl Asıldı-Toplumsal Tarih*, Sayı 67, Temmuz, 1999, İstanbul, s. 4-5.

⁵² *Şunuş*, 11.1.1928:

Ապստամբութեան առաջին ամիսներուն երբ ապստամբեալները հարուածներ կը հասցնեն զինուորական միութիւններուն, բանակը միայն յաջողութիւն կ'արձանագրէ սաւառնորդներու օդային յարձակումներով, որոնցմէ մէկն է Աթաթիւրքի հոգեդուստրը Սապիհա Կէօքչէն⁵³։ Յաջորդող ամիսներուն կացութիւնը կը փոխուի եւ զինուորական միութիւնները գերակայութիւն ձեռք կը ձգեն։ Կատարուած խուզարկութիւններու պատճառաւ ժողովուրդը լքելով զիւղերը կ'ապաստանի քարայրներու մէջ, բայց հոն կը մահանան ումբակոծման պատճառաւ։ Բազմաթիւ Քիւրտ ապստամբեալներ կը ձերբակալուին։ Սէյիտ Րըզայի որդիներէն մէկը կը մահանայ, միւսը կը ձերբակալուի, ինք ալ 10 Սեպտեմբերին Էրզինճանի մէջ կը յանձնուի։ Սէյիտ Րըզայի եւ նաեւ բազմաթիւ աշիրէթապետներու մահապատիժը կը գործադրուի նոյեմբերի 15-ին Էլազըղ⁵⁴։

(շարունակելի)

⁵³ Իր մահուընէ վերջ յայտնի կը դառնայ, որ Հայկական ծագում ունի։

⁵⁴ **Köker Osman**, նշուած աշխ., էջ 6-7։